ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

« 06 » մարտի 2025թ. N 57 -Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի նոյեմբերի 05-ի թիվ 151-Լ հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության 11.1 կետի 5-րդ ենթակետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) 2025 թվականի կարիքների համար «ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆՏ-25/1» ծածկագրով (տնտեսական ապրանքներ) ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչված «ԷՎԱ ԲԵՍԹ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկման ենթակա փաստաթղթեր չշտկելու հանգամանքը:
2. Հաստատել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող տեղեկությունները՝ համաձայն կից հավելվածի:
3. Սույն հրամանը սահմանված ժամկետում ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն և մասնակցին:

Недействительная подпись

X

ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Подписано: MARGARYAN KAREN 2410820077

Կ. Մարգարյան

Հավելված 1

ՀՀ ՔԿ գլխավոր քարտուղարի

«06» մարտի 2025թ.

թիվ 57-Ա հրամանի

Մասնակցի						
			գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրա-տուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացա-կարգի ծածկագիրը
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԷՎԱ ԲԵՍԹ» ՍՊԸ	06972027	Լոռի Արջուտ	Սահմանված ժամկետում շտկման ենթակա փաստաթղթեր չշտկելը	-	-	06.03.2025թ. ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆՏ-25/1